

Մաքսային ծառայությունը արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) պետական կարգավորման անբախտելի մասն է, ակտիվ մասնակցում է դրա կարգավորմանը և սպասարկմանը, այդ թվում՝ հայտարարագրվող տեղեկությունների և տրամադրվող փաստաթղթերի կանոնակարգման, ԱՏԳ գործառնությունների համակարգային հսկողության կազմակերպչական պայմանների ստեղծման ճանապարհով: Սա նշանակում է, որ արդի պայմաններում ՀՀ մաքսային ծառայությունը, լինելով պետության տնտեսական համակարգի բաղադրիչ, հարկման և ԱՏԳ կարգավորման ոլորտներում ավանդական գործառնությունների իրականացման հետ մեկտեղ, ավելի ու ավելի ակտիվորեն է հանդես գալիս որպես սոցիալ-տնտեսական ինստիտուտ, որում մաքսային ծառայությունը դրսեւորվում է որպես պետական սպասարկման համակարգի բաղադրիչ: Սույն ինստիտուտը փաստացի ստեղծում է (իսկ անարդյունավետ գործունեության դեպքում՝ չի ստեղծում) արտաքին առեւտրի զարգացման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ՝ դրանով իսկ նպաստելով դեպի համաշխարհային նոր շուկաներ երկրի տնտեսության մուտքին:

Մաքսային սպասարկման կատարելագործման ուղղությունները, պետական մաքսային ծառայությունների մատուցման գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնահարցերը գիտական ժամանակակից հետազոտություններում անբավարար ուսումնասիրության են արժանացել: Չկան մաքսային սպասարկման ոլորտում առկա կազմակերպչական մեծաթիվ հիմնահարցերի լուծման գիտականորեն հիմնավորված մեթոդական մոտեցումներ, ինչը կարելի է մասամբ պայմանավորել ՀՀ մաքսային ծառայության գոյության համեմատաբար կարճ ժամանակահատվածով, «մաքսային ծառայություն» հասկացության բովանդակային բնութագրիչի բացակայությամբ, ոլորտը կարգավորող իրավական ակտերի կիրարկման օբյեկտիվ ու սուբյեկտիվ մի շարք գործոններով և որոշ այլ հանգամանքներով: Չարգացած արտասահմանյան երկրների մաքսային մարմինների գործունեության փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ առավել արդիական խնդիր է ԱՏԳ մասնակիցներին մատուցվող մաքսային ծառայությունների որակի շարունակական բարձրացումը, մաքսային գործի ոլորտում տեղեկատվական համակարգերի կատարելագործումը: Մինչդեռ ՀՀ մաքսային համակարգը զարգացման դեռևս միջանկյալ փուլում է, ինչը պայմանավորում է մաքսային ծառայությունների հիմնախնդիրների իմաստավորման և դրանց արդյունավետ լուծումների որոնման հարցում զարգացած երկրների մաքսային ծառայություններից ետ մնալը: Մաքսային ծառայությունների զարգացման և մաքսային սպասարկման արդյունավետ համակարգի կազմավորման խնդիրը մաքսային գործի արդիականացմանն առնչվող գիտական հետազոտություններում առավել կարևոր ուղղություններից է: Ժամանակակից մաքսատունը նախ ծառայություն է, քանի որ ներկայում առաջին պլան է մղվում միջազգային առևտրին աջակցության հարցը: Այս համատեքստում ՀՀ մաքսային համակարգի կատարելագործման գործընթացի շարունակականության, մաքսային գործի կազմակերպման զարգացման նոր մակարդակի ապահովման համար կարևոր նշանակություն է ստանում հանրա-

պետությունում մաքսային մարմինների կողմից մատուցվող մաքսային ծառայությունների համակարգի բարելավման խնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների մշակումը:

Ժամանակակից ըմբռնմամբ՝ «մաքսային ծառայություն» հասկացության ներքո կարելի է հասկանալ մաքսային գործի ոլորտում այնպիսի գործողությունների և միջոցառումների արդյունքը, որոնք ուղղված են ապրանքի մաքսագերծման արագ և արդյունավետ իրականացման՝ ԱՏԳ մասնակիցների պահանջմունքների բավարարմանը, ինչպես նաև տնտեսական անվտանգության ապահովման և պետական բյուջեի համալրման՝ պետության պահանջմունքների բավարարմանը:

Հարկ է նշել, որ մաքսային գործի տեսությունում և պրակտիկայում բավարար չափով դիտարկված չէ «մաքսային ծառայությունների ոլորտ» և «մաքսային սպասարկման ոլորտ» հասկացությունների հստակեցման հարցը: Մաքսային ծառայությունների ոլորտին կարելի է դասել միայն այն հարաբերությունները, որոնք մաքսային ծառայությունը կամ ԱՏԳ մասնակցին մատուցվում է մաքսային ծառայություն, ըստ որում՝ ինչպես տնտեսական, այնպես էլ իրավական բնույթի: Այս պարագայում մաքսային ծառայությունը հանդես է գալիս որպես գործունեություն, իսկ մաքսային ծառայությունների ոլորտը ներառում է միայն տնտեսական այն հարաբերությունները, երբ ԱՏԳ մասնակիցները իրենց պահանջմունքների բավարարման համար ստանում են սպառողական արժեք՝ մաքսատան աշխատակցի, մաքսային միջնորդների գործունեության տեսքով: Ինչ վերաբերում է մաքսային սպասարկման ոլորտին, կարելի է նշել, որ այն ներառում է իրային տեսք չունեցող մաքսային ծառայությունները, որոնք միաժամանակ հանդիսանում են և՛ գործընթաց, և՛ աշխատանքի արդյունք (օրինակ՝ տեղեկատվության տրամադրումը, խորհրդատվությունը և այլն):

Արդի պայմաններում ՀՀ մաքսային ծառայությունների ոլորտը հանդես է գալիս որպես սոցիալ-տնտեսական զարգացած ինստիտուտ, որը ներառում է մաքսային մարմինների համակարգը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավորությամբ, որոնք մատուցում են ԱՏԳ գործառնությունների մաքսային ձեակերպման ծառայությունները, մաքսագերծման գործընթացն ուղեկցող ծառայությունները (մաքսային մարմիններին պատկանող մաքսային պահեստներում ապրանքների պահպանությունը, մաքսային ուղեկցումը և այլն), որոնք վճարվում են ԱՏԳ մասնակիցների կողմից մաքսավճարների միջոցով, մաքսային ծառայություններ տրամադրող առևտրային կազմակերպությունները, որոնք մատուցում են մաքսային փաստաթղթերի ձեակերպման, բեռների տեղափոխման և պահպանության ծառայություններ:

Մեր մոտեցմամբ՝ ՀՀ-ում մաքսային ծառայությունների համակարգի զարգացման հիմնական նպատակը մաքսային ծառայությունների համակարգի արդյունավետության բարձրացման և կայուն զարգացման ապահովումն է, շահույթ հետապնդող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունն ընդգրկող մաքսային սպասարկման զարգացած համակարգի ստեղծումը:

Նշված նպատակի իրագործման հրամայական անհրաժեշտությունից ելնելով և հաշվի առնելով հայաստանյան իրողություններ-


ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
ՀՀ մաքսային համակարգի ինստիտուցիոնալ զարգացման հիմնական ուղղությունները
 Գիտական դեկավար՝
Սամսոն ԴՎՈՅԱՆ
 Տնտեսագիտության դոկտոր,
 պրոֆեսոր

Մուրադ ՍԱՐԳՍՅԱՆ
 Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի հայցորդ



Մաքսային ինտերակտիվ տեղեկատվական համակարգի բաժինները և մասնակիցները



րը՝ կարելի է առանձնացնել մաքսային ծառայությունների համակարգի զարգացման հետևյալ ուղղությունները.

- ✓ մաքսային սպասարկման գործընթացի արագացում,
- ✓ տնտեսավարող սուբյեկտների կողմից մատուցվող մաքսային ծառայությունների շրջանակի ընդլայնում,
- ✓ մաքսային համակարգի կադրային ներուժի որակի բարձրացում, մաքսային հարաբերությունների ոլորտում առկա կոռուպցիայի և հանցավոր այլ երևույթների դեմ անզիջում պայքար,
- ✓ մաքսային ձեռակերպման օպերատիվության բարձրացում,
- ✓ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում, մաքսային համակարգում տեղեկատվական նոր համակարգերի ներդրում,
- ✓ մաքսային հիմնական եւ «հարակից»՝ ենթակառուցվածքների զարգացում:

Մաքսային ծառայությունների համակարգի զարգացման՝ վերը նշված ուղղություններով հիմնական նպատակի իրագործումը, մեր մոտեցմամբ, պահանջում է հետևյալ գործիքների կիրառումը.

- ✓ տեղեկատվական-խորհրդատվական,
- ✓ ֆինանսատնտեսական,
- ✓ կադրային,
- ✓ իրավանորմատիվային:

Մաքսային ծառայությունների համակարգի կատարելագործման մեթոդների շարքում հարկ է նշել.

- Միասնական տեղեկատվական ինտերակտիվ համակարգի ներդրումը:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում մաքսային ծառայությունների ոլորտի զարգացման կարևոր ուղղություններից է մաքսային մարմինների գործունեության մեջ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը և գոյություն ունեցող տեխնոլոգիաների արդիականացումը: Մաքսային ծառայությունների ոլորտի մասնակիցների պահանջմունքների բավարարման ուղղված տեղեկատվական համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ դրանք ներկայացնում են մաքսային ծառայության Ինտերնետ-պորտալներ և հիմնականում պարունակում են մաքսային մարմինների գործունեության մասին տեղեկատվություն: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ նպատակահարմար են դիտվում մաքսային ինտերակտիվ տեղեկատվական համակարգի հիմնական բաժինները, մասնակիցները և դրանց փոխգործակցության ուղղությունները ներկայացված են գծապատկերում:

Մաքսային ինտերակտիվ տեղեկատվական համակարգի ներդրման հիմնական խնդիրները հանգում են հետևյալին.

- ✓ տեղեկատվական այլախիսի ենթակառուցվածքի ստեղծումը, որը հնարավորություն կտա մաքսային մարմինների գործունեության մեջ ապահովել թափանցիկության սկզբունքը և պայմաններ կստեղծի համակարգի բոլոր մասնակիցների միջև տեղեկատվության օպերատիվ փոխանակության համար,
- ✓ մաքսային համակարգի բոլոր մակարդակներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը,
- ✓ յուրաքանչյուր տարածաշրջանային մաքսատան, յուրաքանչյուր մաքսային կետի համար ենթահամակարգի ներմուծումը, որը,

մասնավորապես, օժտված կլինի մաքսային սպասարկման որակի նկատմամբ հսկողության էլեկտրոնային համակարգով,

✓ ինտերակտիվ ինտերնետային պորտալի ձեւավորումը՝ էլեկտրոնային հայտարարագրման ներկառուցված համակարգով,

✓ խորհրդակցությունների, նիստերի, համաժողովների անցկացման էլեկտրոնային համակարգի ներդրումը:

● *Մաքսային ծառայությունների համակարգում սպասարկումային մոտեցման մեթոդների ներդրումը, մաքսային սպասարկման կատարելագործման համակարգի յուրացումը:* Մաքսային սպասարկման կատարելագործումը դիտարկել ենք հետևյալ երկու կարևոր ուղղություններով՝

✓ մաքսային ծառայության կադրային ներուժի որակի բարձրացում,

✓ մաքսային մարմինների կազմակերպչական փաստաթղթաշրջանառության կարգավորում:

Այս ուղղություններով մաքսային ծառայությունների կատարելագործման միջոցառումների համակարգը առավել նպատակահարմար է ներկայացնել երեք մակարդակներից կամ փուլերից բաղկացած կառուցվածքի տեսքով:

Համակարգի առաջին փուլում անհրաժեշտ է որոշել մաքսային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատակիցների այն թիվը, որի դեպքում մաքսային մարմնի աշխատակիցների գործունեության արդյունքների և անձնակազմի պահպանման ծախսերի միջև հաստատվում է օպտիմալ հարաբերակցություն:

Երկրորդ փուլը ենթադրում է շահագործման արդյունավետ համակարգի ստեղծում՝ անձնակազմի գնահատման և մաքսային ստորաբաժանման աշխատակիցների մաքսային սպասարկման որակի բարձրացման մեթոդների ուսուցանման հիման վրա:

Համակարգի երրորդ փուլը ենթադրում է մաքսային սպասարկման չափորոշիչների մշակում և մաքսային մարմնի կազմակերպչական փաստաթղթաշրջանառության կարգավորում՝ մաքսային ծառայության կառուցվածքային յուրաքանչյուր ստորաբաժանման և կոնկրետ աշխատողի իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության (այդ թվում՝ տրամադրվող մաքսային ծառայությունների որակի բարձրացման ոլորտում) վերանայման նպատակով՝ ելնելով մաքսային գործունեության իրականացման ոլորտում սպասարկումային մոտեցման ներդրման առանցքային խնդիրից:

- *Մաքսային սահմանով տեղափոխվող բեռի մաքսագերծման գործընթացն արագացնող նոր մաքսային ընթացակարգերի և տեխնոլոգիաների ներդրումը:*

- *Տարածաշրջանային մաքսային ենթակառուցվածքների զարգացումը:*

- *Մաքսային մարմինների աշխատակիցների գործունեության արդյունավետության բարձրացումը խթանող ֆինանսատնտեսական գործիքներում առկա թերությունների վերացումը:*

Մաքսային մարմինների և գործարար հանրույթը ներկայացնող կառուցների արդյունավետ փոխգործակցության, մաքսային ծառայությունների մատուցման համակարգի կատարելագործման ուղղված կառավարչական արդյունավետ որոշումների մշակման համար անհրաժեշտ է լուծել այնպիսի խնդիրներ, որոնք առնչվում են մաքսային «հարակից» կառույցների տեղեկատվական-խորհրդատվական ապահովմանը, ֆինանսատնտեսական աջակցությանը, կադրային ներուժի ընդլայնմանը: Այս առնչությամբ առաջարկում ենք «ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ. ծրագիրը»² լրացնել առևտրային հիմունքներով մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործազման ենթաձևագրով: Այն պետք է նպատակ ունենա պայմաններ ստեղծել մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների տեղեկատվական-խորհրդատվական ապահովման, ֆինանսատնտեսական աջակցության, կադրային ներուժի հզորացման համար:

Այս նպատակների կենսագործման համար, մեր մոտեցմամբ, կարևորվում է առաջնահերթ մի շարք միջոցառումների իրականացումը: Այսպես, մաքսային ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունների տեղեկատվական և խորհրդատվական ապահովման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի խորհրդատվական և մարքեթինգային կենտրոնների ստեղծումը: որիդատվական կենտրոնը պետք է իրականացնի հետևյալ գործառնությունները.

- ✓ գոյություն ունեցող մաքսային ռեժիմների, մաքսային ձեւա-

կերպման կանոնների մասին տեղեկատվության տրամադրում դրա հնարավոր օգտագործողներին,

✓ մաքսային կանոնները խախտողների և մաքսանենգների մասին միջգերատեսչական տեղեկատվական միասնական բազայի ստեղծում,

✓ մաքսային վեճերով դատական գործընթացներում խորհրդատվական աջակցության տրամադրում,

✓ գործառնական ծախքերի (մաքսատուրքեր, հարկեր, հաշվապահական հաշվառում, անուիտ եւ այլն) նվազեցմանն ուղղված ծառայությունների մատուցում,

✓ մաքսային բրոքերներին խորհրդատվական եւ վերահսկողական աջակցության տրամադրում գործարար ծրագրերի մշակման եւ իրականացման ընթացքում:

Ինչ վերաբերում է մարքեթինգային կենտրոնին, այն պետք է իրականացնի հետեւյալ գործառնականները.

✓ մաքսային վճարովի ծառայությունների ոլորտի զարգացման հեռանկարային ծրագրերի մշակում ԱՏԳ սուբյեկտների համար,

✓ մաքսային ծառայությունների շուկայում պահանջարկի եւ գնագոյացման մեխանիզմների համալիր հետազոտություն, դրա արդյունքների հիման վրա համապատասխան առաջարկների ներկայացում:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վճարովի հիմունքներով մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար կարելու է նշանակություն ունի ոչ միայն խորհրդատվական, այլ նաեւ ֆինանսատնտեսական աջակցության տրամադրումը: Այս ուղղությամբ առաջարկվում է ստեղծել ֆինանսական տեխնոլոգիաների կիրառման կենտրոն, որն առաջին հերթին պետք է իրականացնի հետեւյալ գործառնականները.

✓ առեւտրային հիմունքներով գործող մաքսային ենթակառուցվածքային օբյեկտների (մաքսային բրոքերներ, ժամանակավոր պահպանության պահեստների, անմաքս առեւտրի խանութների, ավտոտրանսպորտային միջոցների կանգառների, անցակետերի եւ այլն) զարգացման համար վարկավորման լայն գործիքակազմի կիրառումը,

✓ մաքսային փորձաքննության, էլեկտրոնային հայտարարգրման, մաքսային ենթակառուցվածքների ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների լիզինգով ձեռքբերման հարցում մաքսային ծառայություններ մատուցող կառույցներին գործուն աջակցության տրամադրումը:

Մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսատնտեսական արդյունավետության բարձրացման համար կարելու է նշանակություն ունի տեխնոլոգիական միեւնույն շղթայի մաս կազմող տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպությունների փոխգործակցության համար պայմանների ստեղծումը: Այստեղ խոսքը մաքսային բրոքերների, լոգիստիկական եւ ապահովագրական ընկերությունների մասին է, որոնց համագործակցության պարագայում հնարավոր է պահեստային տարածքների տրամադրման, տրանսպորտային փոխադրումների, մաքսային եւ ապահովագրական ծառայությունների

համալիր տրամադրումը ԱՏԳ մասնակիցներին, ինչը առեւտրային հիմունքներով գործող մաքսային սպասարկման ինստիտուտների մրցունակության բարձրացման լուրջ ներուժային հնարավորություններ է պարունակում:

Մաքսային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստող գործոնների երրորդ կարեւոր խումբը կադրային ներուժի հզորացումն է: Այդ նպատակով առաջարկվում է մաքսային ծառայությունների համակարգի կատարելագործման միջոցառումների շարքում ներառել մաքսային գործունեության եւ մաքսային գործարարության կադրային աջակցության կենտրոնի ստեղծումը: Կենտրոնի հիմնական գործառնական պետք է լինեն մաքսային գործունեության եւ մաքսային սպասարկման առանձին տեսակների գծով կադրերի ուսուցման, պատրաստման, վերապատրաստման, ատեստավորման եւ լիցենզավորման ծրագրերի մշակումն ու օգտագործումը:

Այս բոլոր ուղղություններով համապատասխան միջոցառումների իրագործումը հնարավորություն կտա որակապես բարձրացնել ՀՀ մաքսային համակարգի արդյունավետությունը, ստեղծել սպասարկումային ուղղվածություն ունեցող մաքսային համակարգ, որն իր հիմնական բնութագրիչներով կհամապատասխանի միջազգային առեւտրատնտեսական, սոցիալ-քաղաքական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում մաքսային ծառայություններին ներկայացվող պահանջներին:

1. Մաքսային հարակից ենթակառուցվածքների ներքո սույն աշխատանքում հասկանալի է ծառայությունների մատուցման նպատակով տնտեսավարող սուբյեկտների ստեղծած ենթակառուցվածքները: Այս առումով մաքսային հիմնական ենթակառուցվածքները պետական մաքսային գործառնական իրագործման համար ստեղծված ենթակառուցվածքներն են:
2. Ընդունվել է ՀՀ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ս հրամանով:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Մաքսային օրենսգրք, 06.07.2000
2. ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012թթ. ծրագիր, ՀՀ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 10-ի թիվ 187-Ս հրաման
3. Հարությունյան Ա., Մաքսային գործի կազմակերպման հիմնահարցեր, Ուսումնական ձեռնարկ, Եր., Էդիթ Թանգյանի անվ. տպարան, 2004
4. Макрусов В.В., Информатизация в сфере внешнеэкономической деятельности: целостно-эволюционный подход, Тамояня в условиях глобализации внешней торговли, М: РИО РТА, 2000, с. 221-244.
5. Назаренко В.М., Назаренко К.С., Таможенное обслуживание внешнеэкономической деятельности, М.: Экзамен, 2001.
6. Сафронов А.В., Актуальность развития маркетинга в системе управления государственными таможенными услугами, Таможенное дело, экономика и право на Дальнем Востоке, Сборник научных трудов, Под общ. ред. В.И. Дьякова, Владивосток: ВФ РТА, 2006, с. 134-139.

ՀՀ Մաքսային օրենսգրքի կարելու ուղենիշերից մեկը արտաքին տնտեսական գործունեությունը բացառապես տնտեսական մեթոդներով կարգավորելու պայմանների ստեղծումն է, ինչը, ի թիվս այլ գործոնների, ենթադրում է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման նպաստավոր պայմանների ստեղծում, մաքսային բոլոր ընթացակարգերի պարզեցում եւ արագացում: Այս համատեքստում կարելու է նշանակություն է ստանում ապրանքների համընդհանուր մաքսային հսկողությունից հրաժարումը եւ ռիսկերի կառավարման համակարգի (ՌԿՀ) ներդրումը:

ՌԿՀ-ն համաշխարհային պարկիտկայում դիտարկվում է որպես մաքսային հսկողության հիմնական փոխարկայություն: Համաշխարհային առեւտրի ծավալները տարեցտարի աճում են ավելի ու ավելի բարձր տեմպով եւ ակնհայտ է, որ որքան պետությունն չի կարող ստեղծել մաքսային այնպիսի համակարգ, որն ի վիճակի կլինի համընդհանուր եւ արդյունավետ հսկողություն իրականացնել արտաքին առեւտրային գործառնականությունների նկատմամբ: Բնականաբար՝ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման, արտաքին առեւտրային գործառնականությունների արհեստական սահմանափակումների վերացման հրամայականը այլ տարբերակ չի թողնում, քան ընտրողականության վրա հիմնված մաքսային հսկողության համակարգի կազմակերպումը: Ընտրող-

ողականության սկզբունքն առաջին հերթին ենթադրում է, որ բուն մաքսային հսկողության իրականացմանը պետք է նախորդի լուրջ վերլուծական աշխատանք, որի արդյունքում կհիմնավորվի հսկողության այս կամ այն մեթոդի ընտրությունը:

Չարգացած տնտեսությամբ երկրներում մաքսային համակարգերը վերջին մի քանի տասնամյակի ընթացքում աստիճանական անցում են կատարում ընտրողականության սկզբունքի կիրառման մաքսային հսկողության պրակտիկայի ամբողջական գործադրմանը՝ այս ողջ ժամանակահատվածում մշակելով, շարունակաբար կատարելագործելով եւ ներդնելով մաքսային հսկողության արդյունավետության բարձրացմանը նպաստող մեթոդներ, մեխանիզմներ եւ գործիքներ: Ներկայում ռիսկերի կառավարման համակարգի վրա հիմնված մաքսային հսկողության մեխանիզմների ներդրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է այն բոլոր երկրների համար, որոնք իրականացնում են տնտեսության, պետական կառավարման ամբողջ համակարգի ինստիտուցիոնալ եւ կառուցվածքային վերափոխումներ, եւ որտեղ արդյունավետ սկզբունքների վրա հիմնված արդիական մաքսային համակարգի կազմավորումը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այս երկրների շարքում է, քանակաբար, նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Հարկ է նշել, որ ՀՀ մաքսային ծառայությունում ստեղծված վարչարարության եռամակարդակ համակարգը, որը միավորված